ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՆՈՋ ԿԵՐՊԱՒՈՐՈՒՄԸ ԾԵՐԵՆՑԻ ՎԷՊԵՐՈՒՄ

Մուտք

Այն, որ հայ կինը կարեւոր դերակատարում է ունեցել ազգային, հասարակական կեանքի բոլոր առանցքային անցուդարձերում, անհերքելի է։ Որքան էլ հայոց հազարամեակների պատմութիւնը հարուստ է իրենց կեանքը հայրենիքի ազատութեան համար նուիրաբերած անձնուէր, խիզախ ու համարձակ, հայրենասէր հայուհիների գործած սխրանքներով, միեւնոյն է, «մեր պատմութեան մէջ մոռացուած է մեր ժողովուրդի մի նշանաւոր տարրը՝ կինը։ Մենք ծանօթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն...»[1]։

Սկսած V դարում Եղիշէի եւ Ղազար Փարպեցու նկարագրած «Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց» սխրանքներից մինչեւ Վարդան Մամիկոնեանի դուստր Շուշանիկի, հայոց թագուհիներ Փառանձեմի, Զարմանդուխտի, Ճալալ իշխանի դուստր Ռուզանի, Ռուբինեան Հեթում սպարապետի կին Զարմանուհու, Այծեմնիկ Անեցու, քաջակորով, հայրենասէր, ազատատենչ միւս անհատ հայուհիների քաջագործութիւնները, թշնամու դէմ մինչեւ վերջ կռուելու եւ նահատակուելու անձնազոհութեան օրինակներից մինչեւ 1724 թուականին՝ Երեւանի ինքնապաշտպանութեան ժամանակ, տղամարդկանց կողքին թուրքական 60 հազարանոց բանակի դէմ կռուող հայ կանանց հաւաքական սխրագործութիւնները հայրենասիրութեան ուղեցոյց են դարձել սերունդների համար[2]։ Նրանցից առանձին դէմքեր գեղարուեստական մարմնաւորում են ստացել Ներսէս Շնորհալու պոեզիայի մէջ եւ, մինչեւ Ծերենցը, հայ նոր գրականութեան ու դրամատուրգիայի առանձին գործերում[3]։ Իսկ Ծերենցն իր «Թորոս Լեւոնի», «Երկունք Թ. դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերում յօրինել է հայ պատմութեան մէջ գործող մի շարք կանանց կերպարներ, որ ոչ միայն Եղիշէի դրուատած կանանց պէս յաղթանակ են տարել իբրեւ «արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմին»[4], այլեւ տղամարդկանց հետ միասին ամուր ձեռքով պաշտպանել են հող-հայրենին։

Բնաւ յաւակնութիւն չունենալով սպառիչ խօսք ասելու Ծերենցի «Թորոս Լեւոնի», «Երկունք Թ. դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերի կանանց կերպաւորման մասին՝ ջանացել ենք նորովի ներկայացնել հայրենասիրութեան այդ գաղափարակիրների սխրանքները VII եւ IX դարերի ազատագրական պայքարների ընթացքում։ Միաժամանակ համապարփակ լուսաբանութեան ենք արժանացրել կին-կերպարի ֆենոմենը։

Եւփիմէի և Մարգարիտի կերպաւորումը «Թորոս Լեւոնի» վէպում

Ծերենցն իր երեք պատմավէպերի նիւթը հիմնականում քաղել է Սեբէոսի, Յովհաննէս Դրասխանակերտցու, Մատթէոս Ուռհայեցու, Թովմա Արծրունու, Սմբատ Սպա-

---

[1] **Բաֆֆի**, «Սամուէլ»-ի առաջաբանը, երկերի լիակատար ժողովածոյ, հ. 7, Երեւան, 1956, էջ 2:

[2] Տե՛ս **Մինասեան Է.**, «Հայ հերոսուհի կանայք», Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2016, էջ 9:

[3] Տե՛ս «Հայ նոր գրականութեան պատմութիւն», հ 3, Երեւան, 1964, էջ 528:

[4] Տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Մոսկուա, 1861, էջ 407:

բապետի աշխատութիւններից եւ ներկայացրել է հայոց պատմութեան երեք արտասովոր ժամանակաշրջանները՝ իրենց պատշաճ դէպքերով ու դէմքերով։ Գրութեան յաջորդականութեամբ առաջինը «Թորոս Լեւոնին» է, որում Ծերենցը նկարագրում է Կիլիկիայի պետական անկախութեան վերականգնման համար XII դարի կէսերին ծաւալուած պայքարը։

Վէպում հեղինակը հանդէս է բերել կանանց հերոսական մի շարք կերպարներ, որոնք համակուած են հայրենիքի ազատագրութեան վեհ գաղափարով ու եռանդագին մասնակցում են Թորոս իշխանի՝ պետական կարեւորութիւն ունեցող նախաձեռնումներին։ Այդպիսի կանանցից մէկը Թորոսի կինը՝ Եւփիմէն է, որին Ծերենցն օժտել է մարդկային լաւագոյն յատկութիւններով, վսեմ մարդասիրութեամբ ու ջերմ հայրենասիրութեամբ, խիզախութեամբ, անձնազոհութեամբ, մտաւոր եւ հոգեւոր բարձր ընդունակութեամբ, «վասնզի այդ չքնաղ եւ արքունի կերպարանքին փափկութեան եւ մտաւորական սրամտութեան ներքեւ բուռն եւ խրոխտ բնաւորութիւն մը կար, որ կարելի էր կոտրել եւ փշրել, բայց ոչ երբեք ծռել եւ հակել»[5]։

Եւփիմէն իր անձնական զգացումները ներդաշնակում է հայրենասիրութեան բարձր գաղափարի հետ՝ խորապէս գիտակցելով, որ վերջինս խիստ անհրաժեշտ նախապայմաններից մէկն է անձնական երջանկութեան ստեղծման համար։ «Մի կարծեր զիս այն կանանցմէ,- ասում է Եւփիմէն Թորոսին,- որոնց մտքին ընդարձակութիւնը իրենց սրսկապանէն անդին չի կրնար տարածուիլ, ո՛հ, չէ՛, ես քեզի՝ ինչպէս Ռուբէնին՝ իշխանական աթոռ մը կը փափաքիմ, ես ձեր այս տոհմական կալուածքին մէջ Պլուտարքոսի դիւցազուններ կը տեսնեմ. ներէ՛, ես դեռ մօրս ազգին դիւցազունքը չեմ ճանչէր, եւ կրնաս ապահով լինել, որ անխոնջ գործակից մը եւ ամենայն վտանգաց անվեհեր դիմագրաւ մը յիս պիտի գտնես...» (էջ 25)։

Եւփիմէի խօսքերի մէջ առկայ է կանացի սեթեւեթանք, որը, սակայն, լի է ջերմ հաւատով Թորոսի հանդէպ ունեցած սիրոյ նկատմամբ։ Այդ խօսքերը յուզում են Թորոսին, եւ նա պատասխանում է միմիայն մի բաղձանքով. «...դու փառասէր ես, կ՚ըսես, կ՚ուզես թագուհի ըլլալ, եղի՛ր, միայն հայ եղիր, եւ առաջին սպասաւորդ եւ խոնարհ ծառադ ես կը լինեմ, եւ բոլոր իմ ազգս քու հպատակդ կը լինի, միայն թէ օտարին գերութենէն ազատի» (էջ 25-26)։

Նախքան Թորոս իշխանին հանդիպելը Եւփիմէն կաթոգին սիրում էր նրա եղբօրը՝ Ռուբէնին, բայց կեանքի հանգամանքներն այնպէս էին դասաւորուել, որ թշնամու անգութ ձեռքը շատ վաղ կտրել էր նրա կեանքի թելը։

Ռուբէնին կորցնելուց յետոյ Եւփիմէի հոգեկան աշխարհում առաջանում է խոր բեկում. նա օր ու գիշեր մտածում էր Ռուբէնի մասին եւ զրկւում քնից ու հանգստութիւնից։ Բարեբախտաբար, անանցանելի թուացող վիշտը մի գեղեցիկ օր փոխւում է ուրախութեան եւ դուրս բերում նրան հոգեկան ծանր իրավիճակից։

Թորոսին հանդիպելուց յետոյ Եւփիմէն գտնում է իր կորցրածին, որն ամոքելու էր իր ցաւերը եւ նոր կեանք պարգեւելու իրեն։ Հեղինակը վէպի սկզբում նկարագրում է Եւփիմէի մանկութիւնը, որբանալը, ապա Դիոնիսի խնամքի տակ մեծանալը։ Այնուհետեւ բացում է նրա սրտի անթեղուած կրակը, բոցեր հանում այնտեղից, վառում ընթերցողի էութիւնը։

---

[5] **Ծերենց**, Երկեր, Երեւան, 1957, էջ 34։ Այսուհետ սոյն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում։

Այդպիսի բոց են Եւփիմէի անզուսպ սէրը, նրա խոր մարդասիրութիւնը։ Աղջկայ անձնական եւ ընտանեկան կեանքի ողբերգութեանը ծանօթանալուց յետոյ Թորոսը որոշում է նրան իր հետ հայրենիք տանել, ուստի հանգամանօրէն բացատրում է յետագայ իր ծրագրերի մասին եւ ըմբռնել տալիս նրան այն գործի վեհութիւնը, որին իրենց հրաշալի կեանքը պիտի նուիրաբերէին։ Այդ միտքը գնալով վրդովում էր նրանց հոգին, դառնում մի երազական ու բաղձալի պատրանք։

Այնտեղ՝ հեռաւոր հայրենի աշխարհում, Եւփիմէն կը ստանար այն, ինչ որ այստեղ առյաւէտ կորցրել էր՝ ազատութիւնը, հոգու անդորրը, պատիւը, բոլորը կը վերականգնուէին եւ նրա կեանքը կ՚անցնէր խաղաղ, անխռով, երջանիկ։

Ծերենցը նրա մէջ յայտնաբերում է այնպիսի գծեր, որոնք իրենց պայծառութեամբ, առաքինութեամբ եւ գրաւչութեամբ դառնում են ուսանելի նաեւ մեր օրերի համար։ «Իմ պարտքս է,- ասում է Եւփիմէն,- վիրաւորները դարմանել, որբերու, այրիներու հաց, բնակարան ու մխիթարութիւն ճարել, յուսահատները քաջալերել, այո՛, գիտեմ իմ պարտքս ասոնք են, եւ թէ որ ասոնք ես չի կատարեմ՝ արժանի չեմ իշխանի մը ոչ թէ կին, այլեւ ոչ աղախին լինելու» (էջ 67-68)։

Եւփիմէն իր քաղաքական հայեացքներով ու գաղափարներով լիովին համապատասխանում էր Թորոսին. նա արժանի էր դառնալու նրա կինը, նրա կեանքի անբաժան ընկերուհին, սակայն Ծերենցը դրանով չի բաւարարւում։ Եւփիմէին մօր կողմից նա ներկայացնում է սերուած հայկական Արծրունեաց տոհմից եւ դաստիարակուած ազգասիրական գաղափարներով։ Դրանով նա ցանկանում է հիմնաւորել իր հերոսուհու հայրենասիրութիւնը եւ նուիրուածութիւնը Թորոսի գործին։

Թորոսի եւ Եւփիմէի փոխադարձ սէրը ժամանակաւոր ու անցողիկ բնոյթ չէր կրում. այն հիմնուած չէր մանր ու ճղճիմ հաշիւների վրայ, որին հասնելուց յետոյ կարող էր անէանալ, այլ հիմնուած էր յարատեւ ու անկեղծ զգացմունքների վրայ։ Եւփիմէի հանդէպ տածած անհուն սէրն էր, որ Թորոսին մղում էր հերոսութեան։ «Ես կեանք մը ունէի զոհելու ազգիս համար, կէսը դու կը յափշտակես, Եւփիմէ»,- ասում է Թորոսը, որին յաջորդում է ներքնապէս զգացուող Եւփիմէի յուզիչ պատասխանը. «Ո՛չ այդպէս, կեանք մը ունէիր նուիրելիք ազգիդ, ահա երկուք ունիս անոր նուիրելիք, իմ երակացս մէջ ալ կայ այդ քու Արծրունեաց արիւնէդ» (էջ 53)։ Ըստ էութեան Թորոսի եւ Եւփիմէի հոգեկան ու մտածական աշխարհներն ունեն միեւնոյն բովանդակութիւնը, եւ նրանք միանալով աւելի զօրեղ են դառնում, աւելի վեհ եւ գեղեցիկ, եւ այդ ամէնն ամփոփում է հայ ժողովրդի ազատագրութեան արդար գործին նուիրուելու նրանց միասնական նպատակի մէջ[6]։

Ինչպէս տեսնում ենք, Եւփիմէն վէպի յաջողուած ռոմանտիկական կերպար է։ Հեղինակը նրան հանդէս է բերել դիւցազնական, առնացի յատկութիւններով, որի համար էլ դիւցազնակին[7] է անուանել նրան։ Վերջինս կեանքի իմաստը տեսնում է հարազատ ժողովրդի ազատագրման համար մղուող անձնուրաց պայքարի մէջ։ Անվեհեր մարտնչողների շարքում Ծերենցը, ներգրաւելով կանանց, կոչ է անում նրանց դուրս գալ անձնական նեղ կեանքից եւ տղամարդու հետ մտնել ռազմի դաշտ ու կռուել հայրենիքի թշնամիների դէմ։ Կնոջ առաջաւոր դերի նկատմամբ ունեցած այսօրինակ վերաբերմունքը հեղինակի առաջադիմական հայեացքի արդիւնքն է, որը ցոյց է տալիս,

---

[6] Տե՛ս **Ծերենց**, երկեր, Առաջաբան, Երեւան, 1957, էջ XII։

[7] Տե՛ս **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 111։

թէ Ծերենցը որքան բարձր կարծիք է ունեցել հայ կնոջ մասին. ակնբախ է, որ նրա երեք վէպերում էլ կանայք օժտուած են հայրենական բարձր գաղափարներով եւ ազատասիրական ձգտումներով։

Վէպում Եւփիմէն բնութագրուած է իբրեւ ազդեցիկ կին, որն իշխում է իր շրջապատի վրայ։ Նա իշխում է ոչ թէ իր կանացիական առաքինութիւններով, իր գեղեցկութեամբ ու քնքշութեամբ, այլ իր մարդկային բարոյական բարձր յատկութիւններով, առաջաւոր գաղափարներով, խորը տրամաբանութեամբ, ժողովրդայնութեամբ, յոյների դէմ տածած իր ատելութեամբ։ Սակայն վերջինիս մօտ երբեմն խօսում է կանացի թուլութիւնը։ Պաշտօնական զբաղմունքներից ազատ ժամերին նա տառապում է ձանձրոյթից եւ արտայայտում իր դժգոհութիւնը ամուսնուն։ Թորոսը կարողանում է մեղմել Եւփիմէի հոգեկան ճգնաժամը եւ հանգստացնել նրան։ Ուշարժան է նրանց երկխօսութիւնը.

«- Ինչչա՞փ ժամանակ դեռ այս կեանքը պիտի տեւէ։

- Դեռ մինչեւ վաղն իրիկուն։

- Անկից վե՞րջը։

- Անկից վերջն զքեզ այս վայրենի լերանց իշխանուհի պիտի հրատարակեմ» (էջ 88)։

Սակայն շուտով Եւփիմէն թօթափում է իրեն հետապնդող ձանձրոյթը, եւ հայրենիքի սէրը դառնում է այն հիմքը, որի վրայ պիտի կառուցէր իր երջանկութիւնը։ Եւփիմէն գիտակցում էր, որ այդ երջանկութիւնը լիակատար կարող էր լինել միայն այն ժամանակ, երբ հայրենիքն ազատագրուէր օտարի լծից։ Ահա թէ ինչու Եւփիմէն առանց տատանուելու ասում է Թորոսին, որ «անխոնջ գործակից մը» եւ «անվեհեր զինակից մը» (էջ 25) պիտի լինի Թորոսի համար։ Կնոջ այս խօսքերը պէտք է դիտել հայրենասիրութեան հայեցակէտից։

Եւփիմէի մահից յետոյ Ծերենցը տպաւորիչ գոյներով է ներկայացնում Թորոսի ապրումները, երբ փոքրիկ Գոհարիկը հօր ծնկներին էր նստում, «իր գանգրահեր գլուխը կը դնէր կուրծքին, իր փափուկ ձեռքերով նորա մորուքը կը փայփայէր, լուսալիր, քաղցր աչքերը նորա խորունկ աչքերուն կը յառէր, իր գողտրիկ ձայնը՝ սրտին եւ տարիքին պարզութենէն բխած անոր ականջին անուշ խօսքեր կը մրմնջէր...» (էջ 172), արդեօք ինքը՝ Ծերենցը, այդ պահին չէ՞ր յիշում իր դստեր՝ մօրը կորցրած Թագուկի վաղ տարիները, երբ նա ամէն կերպ աշխատում էր մոռացութեան տալ իր վիշտը։ «Ինչո՞ւ, հայրիկ, այսպէս մեծ շունչեր կ՚առնես»,- հարցնում էր Գոհարիկը՝ լսելով հօր սրտից բխած հառաչանքները։ «Դժուար էր այդ հարցմունքին պատասխանել, պէտք էր խոյս տալ, բայց ո՞ւր, ամէն օր, ամէն վայրկեան, երբ զբաղմունք զինք կը թողուին, այսպիսի տեսարաններ կը նորոգուէին, մինչեւ որ ժամանակը, որ յիշատակ չի մոռցներ այն մտքերուն, որ յիշողութիւն ունեն, այլ կը տկարացնեն...» (էջ 172-173)։

Վէպի յաջողուած կանանց կերպարներից է նաեւ Մարգարիտը՝ Անարզապա բերդի կուսակալի դուստրը։ Մարգարիտը եւ Անարզապայի իշխանը իրարամերժ հոսանքի ներկայացուցիչներ են, գաղափարապէս տարբեր տեսակէտների եւ սկզբունքների տէր մարդիկ։ Ստեղծուած իրադրութիւնը Մարգարիտին դարձրել էր բանիմաց ու շրջահայեաց. նա համոզուած էր, որ քաղաքական լարուած մթնոլորտում ժողովրդին խաբելն անհնար էր։ Բայց նա լռում էր, մինչեւ վերջնականապէս կը պատռուէր հօր

այլանդակ դիմակը, մինչեւ հանդէս կը գար հէնց ինքը՝ ժողովուրդը, եւ հիմնաւոր փաստերով կը բացայայտէր հօր կատարած արարքների անարդարութիւնը։ Մարգարիտը գիտէր, որ լեռներում ապրող մարդիկ ոչինչ չեն մոռանում, ոչինչ չեն թողնում առանց վրէժի եւ փոխհատուցման։

Անարզապայի Սմբատ իշխանի այլանդակ ընտանիքի մէջ, ուր իշխում էին բռնութիւնն ու վայրի բարքերը, մխիթարական շատ քիչ բան կար. ժողովրդին ջերմացնող սիրտն ու միակ լուսաւոր կէտը Մարգարիտն էր, որը հեղինակի կողմից բնութագրւում էր իբրեւ առաքինի, համեստ, խելացի եւ բարեհամբոյր մի աղջիկ, որ վայելում է թէ՛ զինուորների եւ թէ՛ ժողովրդի սէրն ու յարգանքը. «Մարգրիտ այդ պալատին մէջ՝ փշոտ մացառներու եւ տատասկներու մէջ աննման ծաղիկ մը, որ ամենէն ժպիրհները եւ անզգամները կը յարգէին ու կը պատուէին» (էջ 117)։

Սմբատի մահից յետոյ ժողովուրդը Մարգարիտին դարձնում է բերդի տիրուհի, եւ այդ օրերից սկսած՝ Մարգարիտի իմաստութեան եւ գթառատութեան շնորհիւ Անարզապայի իշխանութեան սահմաններում թագաւորում է արդարութիւնն ու երջանկութիւնը։

Մարգարիտն ընթերցողին ներկայանում է ազնիւ ու մարդասիրական զգացումներով օժտուած մի աղջիկ։ Իբրեւ գթութեան քոյր՝ նա, ամէն առաւօտ դեղատուփը ձեռքին, գնում էր բուժելու անօգնական հիւանդներին։ Վերջիններիս ցոյց տուած իր սրտացաւ վերաբերմունքով եւ բարեխիղճ աշխատանքով արժանանում է նրանց բոլորի համակրանքին։ Ամէն անգամ, երբ ապաքինուած հիւանդները բաժանւում էին իրենց սիրտը վեհացնող Մարգարիտից, նրանց թւում էր՝ բաժանւում էին իրենց հարազատ քրոջից[8]։

Մարգարիտը վէպում հանդէս է գալիս իբրեւ սիրող ու յարգող ամուսին, սիրագորով եւ հոգատար մայր, երեխաների հիանալի դաստիարակ, ամուսնու աքանչելի ընկեր ու խորհրդատու, Անարզապա բերդի կառավարիչ[9]։ Նրա խորհուրդներով են առաջնորդւում թէ՛ բերդի բնակչութիւնը եւ թէ՛ դիւցազունները։ Առանց իրենց տիրուհու գիտութեան նրանք ոչ մի քայլի չեն դիմում, ինչպէս խաղաղ աշխատանքի ժամանակ, այնպէս էլ պատերազմական գործողութիւնների ընթացքում։ «Մարգարիտը,- գրում է Ռ. Նանումեանը,- իր մարդկային բարձր առաքինութիւններով, որպէս դրական կերպարի իտէալ, մտել է մեր գրականութեան մէջ յայտնի կին հերոսների շարքը՝ Մուրացանի քոյր Աննայից մինչեւ Շիրուանզադէի անձնուրաց Շուշանիկը[10]։

Վէպում Մարգարիտը եւ Եւփիմէն երկու տարբեր բնաւորութիւններ արտայայտող կերպարներ են, որոնք ինքնին արտայայտում են մարդկային առաքինութեան մասին հեղինակային իտէալի տարբեր կողմերը. մէկը՝ աշխոյժ, անհանգիստ, ոգեւորուած, միշտ հիացող, միւսը՝ լռիկ, ներհուն, իմաստնացած իր խոհերի եւ որոշումների մէջ, երկուսն էլ գեղեցկի ձգտումներով ու զգացմունքներով լեցուն, բարի ու գթառատ[11]։

Կնոջ կերպաւորումը «Երկունք Թ. դարու» վէպում

Ծերենցի վիպական կերպարները՝ Թորոս Լեւոնին, Յովնանը, Գուրգէնը, Թէոդո-

---

[8] Տե՛ս **Ծերենց**, Երկեր, Երեւան, 1957, էջ 170:

[9] Տե՛ս **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 108:

[10] **Նանումեան Ռ.**, Ծերենց կեանքը եւ գործը, Երեւան, 1986, էջ 143:

[11] Տե՛ս նոյն տեղը, էջ 145-146:

րոս Ռշտունին, լինելով հայրենասէրներ, բնական է, որ պիտի ունենային այնպիսի առինքնող, հայրենասէր կանայք, որպիսին պատկերուած են նրանք վէպերում։ Ծերենցը, այսպիսով իր երկերում բարձրացնելով հայ կնոջ դերն ու նշանակութիւնը, ցոյց է տուել նրանց մարդկային բարոյական բարձր արժանիքները։ «Առանձնապէս նշելի է նրա վերաբերմունքը կնոջ նկատմամբ,- գրում է Ա. Տէրտէրեանը,- նա հայ կնոջը հանեց Տիւսապի նկարագրած ընտանեկան ջերմոցից եւ նրան ցոյց տուեց հասարակութեանը օգտակար լինելու ուղին»[12]։

Պատմական այն սկզբնաղբիւրներում, որոնք օգտագործել է Ծերենցը, հայ կնոջ բնութագրող փաստերը քիչ են։ Սակայն ակնբախ է հեղինակի ունեցած վերաբերմունքը հայրենասէր կանանց նկատմամբ, որոնց պատկերում է թէ՛ պատերազմական գործողութիւնների մէջ, թէ՛ հասարակական միջավայրում եւ թէ՛ ընտանեկան պայմաններում։ Հմուտ լինելով մեր ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դաւթի» ժամանակաշրջանին եւ նրա մէջ արտացոլուած դէպքերին՝ Ծերենցն օգտագործել է էպոսում եղած որոշ երեւոյթներ։

«Երկունք»-ի եւ ժողովրդական էպոսի մէջ պատկերուած կանանց որոշ կերպարների մի քանի գծերը՝ նուիրուածութիւնը հայրենիքին, հաւատարմութիւնը սիրած էակին, ազատ սիրոյ գաղափարները եւ կնոջ պարտաւորութիւններն ընտանիքում, նման են։ Օրինակ՝ Հեղինէի կերպարը յիշեցնում է մեր էպոսի Խանդութ Խաթունին. նրա պէս գիտէր գետնաքարշ թունաւոր սողուններ ոտքի տակ առնել, ճզմել ու ջախջախել...

«Երկունք Թ. դարու» վէպում կանայք մեծ դեր են խաղում թէ՛ իբրեւ մայրեր, թէ՛ իբրեւ սիրող ամուսիններ։ Ծերենցը քաջածանօթ էր հայ կնոջ հոգեվիճակներին, նրա տվայտանքներին, նրա բնաւորութեան շատ ու շատ կողմերին եւ մանաւանդ զգացողական աշխարհին ու ապրումներին։ Անշուշտ, այդ խնդրում, ինչպէս իրաւացիօրէն Լէօն է նկատել, Ծերենցի համակրանքը մեծապէս հակուած է դէպի իշխանական տոհմական ծագում ունեցող կանայք, հասարակ դասի կանայք չկան[13]։ Նրա երկերում ռոմանտիկական ոգեւորութեամբ կերտուած կանանց կերպարները ոչ պակաս հայրենասէրներ են, քան իրենց ամուսիններն ու սիրեցեալները, որոնց համար միշտ բարի խորհրդատուներ եւ պայքարի ընկերներ են եղել։ Այդ տեսակէտից յիշարժանի են մի քանի հերոսուհիներ, որոնք իրենց անձնուրաց գործունէութեամբ օգնում են վէպի դրական հերոսներին, նպաստում երկի գաղափարական նպատակադրմանը։ Այսպիսիք են Հեղինէն, Վասկանոյշը, Հռիփսիմէն եւ նաեւ Զարուհի Սիւնեաց օրիորդը։

Գրաւիչ շատ գծերով է օժտուած Հեղինէն։ Նա ազնիւ է, անկեղծ, հայրենիքին նուիրուած անձնուրաց հերոսուհի։ Նա Շէյքսփիրի հերոսներից Բրուտոսի կնոջ նման «ոչ միայն տղամարդու մտքեր, այլեւ տղամարդու ուժ ունի»[14]։

Գուրգէնի՝ Բիւզանդիա մեկնելուց եւ մօր մահից յետոյ Արծրունեաց փառասէր իշխանները Հեղինէի կալուածքներին տիրանալու համար նրան բռնի ամուսնացնում են իր չսիրած իշխանի հետ եւ տէր դառնում Արծրունեաց հարստութեան։ Երկար ժամանակ Գուրգէնից նամակ չստանալով՝ Հեղինէն խիստ մտատանջութեան մէջ է ընկնում։ Նա հաւատացած էր, որ կորցրել էր մի մարդու, որին սիրում էր ամբողջ ուժով։ Այժմ այդ կորուստը նրա համար վշտերից ծանրագոյնն էր։ Երկար տարիների բաժանումը,

---

[12] **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 120։

[13] Տե՛ս **Լէօ**, Ռուսահայոց գրականութիւնը, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 275։

[14] **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 89։

սակայն, չէր յուսահատեցրել Հեղինէին. նա գիտէր, որ Գուրգէնը մի օր պիտի վերադառնար դէպի այն սիրտը, որին երիտասարդական ջերմ սիրով սիրել էր, եւ որը տակաւին ապրում էր՝ իր կորցրած սէրը վերագտնելու յոյսով։

Ծերենցն իր վէպերում յաճախ ջանում էր ստեղծել սիրոյ ռոմանտիկ պատկերներ. նա աշխատում էր վիպական գործողութիւնները դարձնել նպատակասլաց, հետաքրքրութիւն մտցնել զանազան արկածալից, արտասովոր միջադէպերի նկարագրութեամբ։ Սիրող զոյգերի պատահական, անսպասելի հանդիպումներն առհասարակ Ծերենցի նախասիրած ձեւն են, այն բանալին, որով նա կարողանում է բացայայտել հերոսների ներաշխարհը, նրանց զգացմունքների բուռն պոռթկումը։ Գուրգէնի նամակի կեղծումը, Հեղինէի անակնկալ ամուսնութիւնը, Գուրգէնի յայտնուելը Անձեւացեաց իշխանի ամրոցում ըստ էութեան հեղինակային կամայականութեան արդիւնքն են, որոնց միջոցով գրողը հետաքրքիր է դարձնում իր վէպը։ Անմոռաց է Հեղինէի եւ Գուրգէնի հանդիպման տեսարանը Կանգուարի ամրոցում։ Որքա՜ն մեծ ուրախութիւն է պատճառում այդ հանդիպումը երկուսին, ինչպիսի՜ հրճուանքով էր լցում նրանց սրտերն այն պահին, երբ նրանք վերստին գտել էին իրար։ Հեղինէի նկատմամբ տածած բուռն սիրոյ զգացմունքն էր, որ հոգեկան մեծ տպաւորութիւն էր պատճառել Գուրգէնին եւ «ձիւնին», «բուքին», «սառնամանիքին» բերել-հասցրել էր Ռշտունեաց Ոստանը։ Հեղինէի եւ Գուրգէնի բերկրանքն անսահման էր։ Թւում էր՝ նրանք շատ երջանիկ են, բայց իրականում այդպէս չէր. Գուրգէնն ազատ էր, Հեղինէն՝ ամուսնացած։

Հեղինէի հոգեվիճակը չափազանց յուզիչ էր. նրա ներաշխարհում ուժեղ պայքար էր տեղի ունենում, կուում էին երկու հակառակ զգացումներ՝ Գուրգէնի նկատմամբ տածած անկեղծ սէրը եւ ամուսնու պատուասիրութիւնը։ Սակայն, երբ Հեղինէի մէջ առաջացած հոգեբանական գօտեմարտը խաղաղւում է, սկսում է մտածել իր ազգի համար, աշխատում է այդ սէրը զուգակցել հայրենիքի, ժողովրդի, բախտի եւ նրա կեանքի բարեկեցութեան հետ։ Նա առանց հայրենիքի փրկութեան չի պատկերացնում իր երջանկութիւնը եւ հասարակական պարտքի այս խոր գիտակցութեամբ լցուած՝ պահանջում է Գուրգէնից, որ նա ապրի իր ազգի, իր ժողովրդի համար, որի պատիւն այդքան արհամարհուած է եղել արաբական տիրապետութեան ժամանակ։

Հեղինէն Գուրգէնին յորդորում է իր անձը նուիրել հայրենիքի փրկութեան գործին՝ իրեն փայփայելով այն յուսով, որ Գուրգէնը պէտք է փառք ու հռչակ ստանայ այդ կռուի մէջ, ժողովուրդը պէտք է փառաբանի նրա անունը եւ հէնց դրանով էլ պիտի մխիթարուի իր վիրաւոր ու խոցուած սիրտը։

Գուրգէնի հեռանալուց յետոյ Հեղինէի հոգին փոթորկւում է. սէրը դէպի Գուրգէնը պարուրուած էր մի խորին մտահոգութեամբ, մի տեսակ տագնապալի անհանգըստութեամբ։ Ինչո՞վ էր վերջանալու Գուրգէնի կեանքը։ Նա, այս խոհերով էր տարուած, երբ յանկարծ յայտնում են Գուրգէնի ձերբակալութեան բօթը։ Հեղինէի սիրտն ալեկոծւում է, զգում է, որ այլեւս աշխարհում միայնակ է, որովհետեւ կորցրել է թանկագինը, առանց որի դժուար է ապրել։ Նա պատրաստ էր իր անձը զոհաբերել Գուրգէնին բանտից ազատելու համար։ «Բայց Գուրգէնի պէս դիւցազնի մը անողորմ բանտի հալելուն տանիլ անկարելի էր ինձ,- ասում է նա վճռական տոնով իշխանին,- ուստի պէտք էր զանի ազատելու համար զոհել կեանք, պատիւ... եւ ամէն բան. այո՜, ես յանձն առած եմ ամէն բան» (էջ 407)։

Յիրաւի, Հեղինէն դառնում է անձնազոհութեան, հերոսութեան մի կատարեալ

մարմնացում։ Դարաշրջանի հայրենասէր տղամարդկանց նման արհամարհելով մահը՝ ձեռնարկում է Գուրգէնին բանտից ազատելու վտանգաւոր գործը. նա գնում է անձնազոհութեան, որից երբեք չի ընկրկում։

Հեղինէն մինչեւ վերջ հաւատարիմ է մնում իր ուխտին։ Նրան յաջողւում է Խոյի գմբէթի խաւարչտին բանտից ազատել սիրեցեալին եւ վերադարձնել իր հարազատ ժողովրդի գիրկը։ Անձեւացեաց Մուշեղ իշխանի մահից յետոյ Հեղինէն ամուսնանում է Գուրգէն իշխանի հետ։

Վէպի հետաքրքիր կանաց կերպարներից է Վասկանոյշը, որը նոյնպէս պատկերուած է ռոմանտիկ գոյներով։ Ակադ. Ա. Տէրտէրեանը վերջինիս անուանել է «ապերջանիկ», քանի որ վէպի միւս կանանց նման նա չունէր հասարակական եւ անձնական բախտի ներդաշնակութիւնը։ Նա կարող էր լինել մի Մարգարիտ կամ Սեդա, սակայն իր կամքից անկախ դարձել էր վանականուհի[15]։

Բնութիւնը նրան օժտել է մարդկային բնաւորութեան լաւագոյն յատկութիւններով. բարի է, համեստ ու առաքինի։ «Ծերենցի համար իշխանական դասի կանայք ամէն տեղ նոյնն են՝ վեհ, առաքինի, խելոք, վարչական ընդունակութիւններով առատապէս օժտուած։ Զատազանց իտէալականացրել է Ծերենցը նախարարական տներում ապրող տիկիններին եւ օրիորդներին. ոչ ոք պակասութիւն չունի»[16],- իրաւացիօրէն նկատել է Լէօն։

Հեղինակն իր հերոսուհուն նկարագրում է Արտանոյշի վանքում, երբ նա արդէն քսան տարի էր, ինչ գտնւում էր այնտեղ, իսկ նրա կեանքի՝ մինչեւ վանք գնալու շրջանի մասին յետոյ է պատմում։ Վասկանոյշը կորցրել էր իր սիրած տղային, կորցրել էր երջանկութիւնը, իրեն զգում էր խորապէս դժբախտ, ուստի թողնում է իր ունեցածը, հարազատներին եւ գնում է վանք՝ ողբալու սիրոյ կորուստը։ Նրա հաւատը ներքին վիշտը փարատելու արտաքին գործօն է միայն, քանի որ աշխարհիկ կեանքից հրաժարուելու եւ միայնութեան ձգտելու գաղափարին հասել էր ոչ թէ բնական համոզմունքով, այլ անյոյս սիրոյ թելադրանքով։ Վանքը նրա հոգուն հանգիստ էր բերում, սփոփանք. ահա աշխարհում մի անկիւն, մտածում էր նա, ուր մաքուր, անշահախնդիր վերաբերմունքի հանդիպելով՝ կարող է հեռու մնալ իր սեփական դասակարգի բարոյական բարքերից։

Տարիներ շարունակ նա հոգեկան խոր տագնապ էր ապրում։ Հեղինակը Վասկանոյշի բարդ հոգեվիճակը մեկնաբանել է երկու առումով. նախ՝ նա, հակառակ ծնողների ցանկութեան, սիրել էր Յովնանին եւ պատճառ դարձել իր ճակատագրական դժբախտութեանը, երկրորդ՝ նրանց երջանկութիւնը պատնէշւում էր այն ահաւոր դասային տարբերութեամբ, որն ընկած էր իշխանուհու եւ հասարակ գիւղացի Յովնանի միջեւ։

Վասկանոյշի համար այդ սէրը դիտւում էր հասարակական օրէնքի յանդուգն խախտում։ Նա ազնուականի աղջիկ էր, տիրող արտօնեալ դասի ներկայացուցիչ, իսկ Յովնանը՝ հասարակ ժողովրդի ներկայացուցիչ, ուստի նրանք իրաւունք չունէին միմեանց սիրելու։ Հէնց սա է նրանց սիրոյ ողբերգութեան պատճառը։ Դասային անհաւասարութիւնը հասարակական մեծագոյն չարիք է, մարդկանց դժբախտութեան աղբիւր. այս է գաղափարական եզրակացութիւնը։ Արտանոյշի վանքում քսանեօթ տարուայ

[15] Տե՛ս **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 109։

[16] **Լէօ**, Ռուսահայոց գրականութիւնը, էջ 275-276։

բաժանումից յետոյ Յովնանի յանկարծակի յայտնուելը խիստ յուզում է Վասկանոյշին։ Նրա սիրտը լցւում է տագնապով, եւ նա կանգնում է երկու անյարիր զգացմունքի՝ սիրոյ եւ հաւատի առջեւ։ Վասկանոյշը Յովնանին տեսնելիս փորձում է սառնարիւն ձեւանալ, խանդավառ ու երկմտութիւն պատճառող ապրումները ծածկել եւ աշխատում է իր սէրը գաղտնի պահելու ճիգեր անել, սակայն ապարդիւն. նրա կամքի ուժը տեղի է տալիս կանացի թուլութեան առաջ, եւ երբ Յովնանը համբուրում է նրա նուրբ ու փափուկ ձեռքը, նա յուզմունքից ուշաթափւում է։ «Ծերենց,- գրում է Լէօն,- լինելով սաստիկ կրօնասէր, չէ կարողացել աղարտել վանքի անունն ու պատիւը. եւ մայրապետը ու լեռնցի զինուորը, երկու վաղեմի սիրահարներ, սուրբերի պէս են իրար համբուրում»[17]։

Յովնանի եւ Վասկանոյշի սիրոյ ազնիւ զգացմունքների գեղարուեստական պատկերումը հեղինակի վիպասանական արուեստի փայլուն դրսեւորումներից է, ռոմանտիկ գոյներով պարուրուած մի գեղեցիկ եւ յուզիչ պատմութիւն։ Հեղինակը հոգեբանական նրբանկատութեամբ պատկերում է նրանց փոխադարձ վեհացնող սէրը վանքի[18] մռայլ պատերի ներսում։ Քառորդ դար է անցել նրանց վերջին հանդիպումից, բայց նրանց սրտերում չի մարել երիտասարդական տարիների առաջացած սիրոյ հուրը։ Նրանք սիրում են իրար խելայեղօրէն, գգւում կարօտով իրար եւ այդպէս զրուցում երկար, շատ երկար։ Նրանք համոզուած են, որ բնութիւնը մարդուն օժտել է ազատ ապրելու եւ սիրելու իրաւունքով, բայց մարդկային այդ ազնիւ զգացումները կաշկանդուել են բնութեան անսահմանափակ օրէնքներով՝ մարդու ազատ կամքի առջեւ կանգնեցնելով դասակարգային բոլոր պատնէշները։ «Քեզմով ես երջանիկ կրնայի լինիլ աշխարհիս վրայ՝ իմ այս միայնութեան կեանքով,- ասում է Վասկանոյշը Յովնանին,- աստուած այս վերջինը միայն կամեցաւ, որովհետեւ մարդիկ նորա օրէնքները ծամածռել յանդգներ են. ծնողք յիմար սովորութեանց եւ գոռոզութեան իրենց զաւակները եւ իրենց ծնելական գութը զոհել օրէնք ըրեր են. եւ ազնուատոհմութիւնը, երբ բարձրէն արհամարհոտ աչք կը ձգէ ռամկին վրայ եւ կը կարծէ, թէ այդ անարգ արարածն իրեն համար է ստեղծեալ, ահա այսպէս կը պատժուի եւ գերութեան շղթայներու դառն ճաշակը կ՚առնէ» (էջ 355)։

Վասկանոյշը ջերմագին սիրում է Յովնանին՝ այդ սիրոյ մէջ չճանաչելով ոչ մի խոչընդոտ, ոչ մի դասային տարբերութիւն. «Ես քեզ սիրեցի եւ դարձեալ կը սիրեմ եւ միշտ պիտի սիրեմ» (էջ 355)։

Սրբազան եւ անկեղծ սիրով կապուած լինելով Յովնանի հետ՝նա հակառակ ծնողների պնդումներին՝ իր իշխանական իրաւունքների եւ նրանց ոտնահարման մասին, մնում է անդրդուելի. «Ես չեմ ուզէր, որ դու աշխարհիս յիմար օրէնքները աստուծոյ բնութեան հրամայած օրէնքներէն վեր դնես»,- ասում է նա Յովնանին (էջ 355)։

Ծերենցը քննադատում է ժամանակի բարոյական «սրբագործուած» օրէնքները, դրամական յարաբերութիւնների վրայ հիմնուած առանձին անհատների դժբախտութիւնը, փողի, հարստութեան վրայ խարսխուող մարդկային հոգեբանութիւնը։ Յովնանի եւ Վասկանոյշի սիրոյ պատմութիւնը տրուած է գեղարուեստական ընդգծուած հակադրութիւնների միջոցով. հեղինակը իրար հետ բախման մէջ է դնում սոցիալական տարբեր խաւերի պատկանող մարդկանց՝ իրենց փոխադարձ յարաբերութիւններով,

[17] Նոյն տեղում, էջ 276։

[18] Վէպում Վասկանոյշը վանքը բանտ է անուանում։

խոհերով ու զգացմունքներով։

Յովնանը բարդ անհատականութիւն է։ Ծերենցը նրան հանդէս է բերել սուր դրութիւնների ու բախումների ոլորտում, անընդհատ զարգացող գործողութիւնների մէջ։ Խութեցին ամբողջ հոգով նուիրուած է Վասկանոյշին, իր կեանքի իմաստը նա տեսնում է իր սիրած էակի մէջ, այս բոլորը վէպում պատկերուած է ռոմանտիկական շնչով, բայց ժողովրդական մարդը խորապէս սիրում է նաեւ իր հայրենիքը։ Հեղինակը ընտանիքի եւ կենցաղի հարցերը չի առանձնացնում հասարակական-քաղաքական հարցերից։ Նախ՝ հայրենիքի մասին պէտք է մտածել, ապա՝ նոր անձնական երջանկութեան. այս հայեցակէտից ելնելով է, որ գրողը գնահատում է իր հերոսներին։ Ժողովրդի տառապանքին ունկնդիր՝ նա թողնում է Վասկանոյշին ու պայքարելու բուռն եռանդով լեցուն վերադառնում հայրենիք։

Բարոյական բարձր արժանիքներով օժտուած Վասկանոյշի հասարակական գիտակցութիւնը խորապէս ներդաշնակ է Յովնանի գաղափարախօսութեանը։

Վասկանոյշի գիտակցական կեանքը վանքում էր անցել. շրջապատի միանձնուհիներից նա տարբերւում էր բարձր գիտակցութեամբ, բարի ու հեզ բնաւորութեամբ։ Նա շատ-շատերի կեանքն էր փրկել, օգնել իր խեղճ ու թշուառ ժողովրդին։ Նրա իշխանութեան տարիներին վերացել էին ճնշումն ու հարստահարութիւնը, եւ ակնյայտ էր դարձել իշխանուհու բանիմաց, խելացի, արդարադատ ղեկավարութեան շօշափելի արդիւնքը։ Վասկանոյշն անձնազոհութեան սկզբունքի ներկայացուցիչն է վէպում։ Նրա անձնազոհ խիզախութիւնը զարմանք եւ հիացմունք էր պատճառում շրջապատի մարդկանց։

Երկրի համար ծանր օրերին Վասկանոյշը, առաջնորդելով ժողովրդին, դուրս է վտարում Արտանոյշի գաւառը ներխուժած արաբական զօրքերին։ Նա կոչ էր անում ժողովրդին զէնք կրելու եւ ամենեւին չհետեւելու «մի կալ հակառակ չարին բռնութեամբ» աւետարանական սկզբունքին[19]։

Նախարարական երկպառակութիւնների եւ առհասարակ իշխանների վարքագծի մասին բացասական կարծիք ունէր Վասկանոյշը։ Նա աւելի լաւ էր համարում առաքինութեամբ ծառայել ժողովրդին, քան «երթալ անիրաւութեան եւ կեղեքման մասնակցել»։ Վասկանոյշը վէպում պատկերուած է իբրեւ զարգացած մի միանձնուհի, որը ծանօթ է մեր ժողովրդի անցեալի պատմութեանը, գիտի ազգային հերոսներին, որոնք քաղցր զգացումներ են արթնացնում նրա հոգում։ Նա տանջւում է այն ծանր ճակատագրի համար, որ բախտ է վիճակուել հարազատ ժողովրդին։

«Երկունք» վէպում պատկերուած կանանց կերպարներից առանձնայատուկ հետաքրքրութիւն է ներկայանցում նաեւ Արծրունեաց Մեծ տիկինը։ Մի բարդ հոգեբանական կերպար է նա, որը հէնց վէպի սկզբից դրուած է դրամատիկական վիճակում։ Հայրենասիրութեան վսեմ զգացումն ապրում ու շնչում է որդիներին ջերմօրէն սիրող կնոջ կարօտավառ զգացմունքի հետ միասին։

Բայց նրա հոգին փոթորկւում է. մեծ հոգու տէր կինը ողբերգական պահեր է ապրում, երբ իր սեփական աչքերով տեսնում է որդիների ազգադաւ գործունէութիւնը։ Ժողովրդի բախտով եւ նրա ճակատագրով ապրող կնոջը տանջալի գիշերները եւ անմոռաց ծանր խոհերը հանգիստ չեն տալիս։ Նա մտաբերում է, թէ որքան մեծ տարբե-

[19] **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 110։

րութիւն կար Յովնանի եւ իր փառասէր որդիների կատարած արարքների միջեւ։

Խութեցին անձնազոհ հայրենասէր էր, իսկ Աշոտ եւ Գուրգէն Արծրունիները՝ դաւաճաններ. հայրենիքը վտանգի մէջ գտնուելու ժամանակ Յովնանը մասնաւորը զոհում էր ընդհանուրին, իսկ դաւաճան իշխաններն ազգի համար որեւէ օգտակար բան չէին անում. փողը աղաւաղել եւ այլանդակել էր նրանց հոգին, շփացրել նրանց, որոնք իրենց կեանքը վատնում էին խրախճանքներում՝ գիշերային կանանց միջավայրում։ Հեղինակը մի դէպքում նկարագրում է Հռիփսիմէ տիկնոջ որդիների կործանումը, իսկ միւս դէպքում՝ մօր հոգեբանական դրաման, երբ հայրենասիրութեան զգացումը բախւում է մայրական սիրոյ ազնիւ զգացման հետ։

Այստեղ, անշուշտ, դարձեալ յաղթում է հայրենասիրութեան գաղափարը, քանի որ այն, ըստ Ծերենցի, ամենավսեմ եւ ամենաբարձր գաղափարն էր։

Յիրաւի, Արծրունեաց տոհմում միայն այդ խելացի եւ պարկեշտ կինն է, որ ջերմօրէն սիրում է իր հայրենիքը եւ պատրաստ է զոհել նրա համար ամէն բան։

Հասարակ ժողովրդի նկատմամբ արտակարգ սիրալիր վերաբերմունք ունի Արծրունեաց տիկինը։ Նա իրաւացիօրէն արտայայտւում է, որ հայ մեծամեծ իշխանների ամենահիմնական սխալներից մէկը ժողովրդի նկատմամբ նրանց ունեցած արհամարհական վերաբերմունքն է։ Մինչդեռ տիկնոջ կարծիքով ժողովուրդն էր այն հզօր ուժը, որը կարողանում էր պաշտպանել հայրենիքը թշնամու յարձակումներից։ Նա հաւատացած էր, որ ժողովրդի տառապանքները վերջ պիտի ունենան, քանի որ չկար աւելի հզօր մի ուժ, որ ծնկի բերէր նրան։ «Մեր մեծամեծ իշխանաց հազար մէկ յիմարութեանց առաջիններէն մէկն էլ,- ասում է հեղինակի մտքերն արտայայտող Հռիփսիմէ տիկինը,- կ՚արհամարհէն, ոչինչ կը համարին իրենցմէ շատ վատ գտնուած ժողովրդեան մարդը. նորա խելքէն, քաջութենէն, կարողութիւններէն օգուտ քաղել ամենեւին չգիտեն» (էջ 253)։

Ինչպէս տեսնում ենք, Մեծ տիկինը քննադատում է իշխանների վարքագիծը, նրանց գոռոզամտութիւնը, անտարբերութիւնը ժողովրդի ճակատագրի հանդէպ։

Նա ոչ միայն ցաւով է խօսում հասարակ ժողովրդին վիճակուած ծանր կացութեան մասին, այլեւ ընդունում է, որ դրա պատճառը իր դասակարգի մարդիկ են։

Հեղինակը ձգտել է այդ կերպով ցոյց տալ այն ահաւոր տարբերութիւնը, որ կայ ազնուական դասի եւ ժողովրդի միջեւ։

Ծերենցն ընդգծում է իր բացայայտ դրական վերաբերմունքն այդ կերպարի նկատմամբ։ Առանձին ուշադրութիւն է դարձնում նրա հայրենանուէր գործունէութեանը։ Արծրունեաց տիկինը մասնատուած, մանր իշխանութիւնների բաժանուած նախարարական կենտրոնախոյս ուժերի կենտրոնացման գործում իր կանացի նրբամտութեամբ օգնում է առաջադէմ ուժերին, մանաւանդ այն դէպքում, երբ հայրենիքը անխուսափելի ճգնաժամի մէջ էր գտնւում։ «Հռիփսիմէ տիկինը, երբ վտանգն սպառնար՝ խելքը չի շփոթեր,- գրում է հեղինակը,- մանաւանդ թէ շատ անգամ, երբ այր մարդիկ իրենց գլխուն ղեկը կը կորուսէին, նա իրերը, պարագաները կշռել եւ համեմատել գիտէր, եւ ըստ այնմ շարժիլ խորհուրդ կու տար» (էջ 252)։

Հեղինակի բնութագրումից երեւում է, որ Մեծ տիկինը անցեալում բաւականաչափ ազդեցիկ է եղել, կատարել է մեծ գործեր հայրենիքի ու ժողովրդի համար, բայց վէպում ծաւալուող գործողութիւնների մէջ նա հանդէս չի գալիս։

Ծերենցը Արծրունեաց տիկնոջը ներկայացնում է որպէս խոր խառնուածքի տէր մի հայ կնոջ, ուժեղ բնաւորութեան ցայտուն գծերով. նա ունի պարզ հոգի, արտաքուստ միշտ մեղմ է, անսահման բարի, խիստ զայրանում էր, երբ լսում էր, որ արաբական բռնակալները համարձակւում են ոտնահարել հայ ժողովրդի պատիւը, դարերով ստեղծած մշակոյթը։

Խոսրով Ակէացու հետ ունեցած նրա սրտամօտ զրոյցից պարզւում է, որ նա եղել է իր ժամանակի զարգացած կանանցից մէկը, խորապէս ուսումնասիրել է մեծն Ներսէսի ժամանակից սկսած Մերուժանների, Բագրատունի ասպետների, Շաւասպ Արծրունիների, Վարդան Մամիկոնեանների մասին եղած պատմութիւնները։

«Երկունք»-ը հայրենասիրական գրաւիչ երկ է։ Ծերենցն իր վէպով հաստատում է, որ այնտեղ է իսկական արուեստը, ուր մարմնաւորուած է ժողովրդի սխրալի պայքարը, նրա հայրենասիրութիւնն ու հերոսականութիւնը, ջատագովւում է անձնազոհութիւնն ու նուիրուածութիւնը հայրենիքին։

Կնոջ կերպաւորումը «Թէոդորոս Ռշտունի» վէպում

«Թէոդորոս Ռշտունի» վէպի հմայիչ կանանց կերպարներից է Ռշտունեաց տիկինը՝ Սեդան, որը գաղափարական-գեղարուեստական իմաստով վէպի ամենավառ պատկերուած կանանցից է։ Նա աչքի է ընկնում իր եռանդուն գործունէութեամբ, հոգեկան հարուստ ներաշխարհով, բնաւորութեան ուրոյն գծերով, հայրենիքին ու ժողովրդին ծառայելու ազնիւ ձգտումով։ Նա սերտօրէն կապուած է իր ամուսնուն, հետեւում է նրա ամէն քայլին, ուրախանում նրա յաջողութիւններով, տխրում նրա անյաջող ընթացքի համար։ Վիպասանը, յանձին Սեդայի, ստեղծել է իր նախասիրած կանացի մի կերպար՝ ներքին ու արտաքին բարեմասնութիւններով, զգացումներով ու տենչերով, առաքինութիւններով, «արտաքոյ» գեղեցկութեամբ։ «Սովորական կին չէ Ռշտունեաց տիկինը,- գրում է Ծերենցը նրա մասին,- հազիւ քառասունամեայ՝ շատ աւելի պակաս կը ցցնէր, իւր կերպարանած գեղեցկութիւնը այնպիսի փայլ չունէր, որ աչք շլացնէր, այլ այն վարպետներու նկարներուն կատարելութիւն ունէր, որ քանի նայի ոք՝ աչքը կը գրաւէ, կը յափշտակէ, վայելուչ հասակը, դիմաց համեմատութիւնը, յօնից եւ աչաց հրամայող ակնարկը՝ խառնուրդ խստութեան եւ քաղցրութեան, որք ձգող եւ տիրապետող զօրութիւն մը ունէին...» (էջ 509-510)։

Սեդայի մէջ, իբրեւ բարոյական ամենաբարձր յատկանիշ, հեղինակն ընդգծում է ամուսնուն անսահման նուիրուած լինելը։ Ռշտունու կեանքի ամենածանր րոպէներին Սեդան է միշտ եղել նրան նեցուկ եւ փրկութեան խարիսխ։ Նա է եղել ոգեւորութեան աղբիւր նրա ռազմական բուռն գործողութիւնների ընթացքում։ Ռշտունեաց տիկինն անսահման սիրում էր Թէոդորոսին ե՛ւ իբրեւ ամուսնու, ե՛ւ իբրեւ պետական գործին նուիրուած մարդու, ազնիւ հայրենասէրի։ Ամուսնու բացակայութեան ժամանակ ազգային արժանապատուութեան բարձր զգացումով համակուած՝ երկրի ղեկավարումը վերցնում է իր ձեռքը՝ օգնելով ռազմադաշտում պատերազմող ամուսնուն։ Նա անձնուրացութեան չափ նուիրուած է այն ընդհանուր գործին, որի համար պայքարում էին թէ՛ իր ամուսինը եւ թէ՛ ժողովուրդը։ Ստեղծուած քաղաքական ծանր պայմաններում նա երբեք չէր յուսահատւում, չէր կորցնում իր հաւատը գալիք ապագայի նկատմամբ։ Նա միշտ յորդորում էր ամուսնուն լինել քաջ, չվհատուել, չընկրկել, այլ հերոսաբար մարտնչել մինչեւ յաղթանակի լիակատար ապահովումը։ Նա գտնում էր, որ հայրենիքին ու ժողովրդին փրկելու համար պէտք էր նուիրաբերել ամէն ինչ՝ ե՛ւ ընտանիք, ե՛ւ

երջանկութիւն, ե՛ւ տոհմական կալուածքներ։

Ծերենցը, ընդգծելով Սեդայի գործնական պետական գործիչ լինելը, չի մոռանում, սակայն, նրա ընտանեկան կեանքը։ Նա ամէնից առաջ առինքնող կին է ու հոգատար մայր, ունի սիրող ամուսին, նաեւ ընտանեկան այլ մտահոգութիւններ։ Հեղինակը նրա մէջ խտացրել է ազնուական կանանց բոլոր առաքինութիւնները։ Նա ունի իր իւրայատուկ բնաւորութիւնը, ամուր է, ուժեղ կամքի տէր, խստապահանջ ու լուրջ։ Նա աչքի է ընկնում իր բնական առատաձեռնութեամբ, որի հետեւանքով էլ դառնում է բոլորի սիրելին։

«Թէոդորոս Ռշտունի» վէպի հերոսուհիներից է նաեւ Համասպրուհին, որը, ինչպէս Ծերենցի միւս կանայք, ակտիւ նկարագրի տէր մարդ է եւ հայրենիքի ծանր վիճակի հանդէպ հանդէս է բերում մտքի նրբութիւն. հասկանալով առաջաւոր մարդկանց ձգտումը՝ դիմադրում է արաբներին եւ փրկում հայ կուլտուրան վերահաս վտանգից, որին ի նպաստ ի սպաս է դնում իր հարստութիւնը[20]։

Ինչպէս նախորդ վէպերում, այնպէս էլ այս երկում ժողովրդի մղած քաղաքական պայքարի մէջ ներգրաւած հայրենասէր կանայք երջանկութիւն են որոնում ոչ միայն ընտանեկան նեղ մթնոլորտում, այլեւ հասարակական-քաղաքական գործունէութեան մէջ։ Օտարերկրեայ նուաճողների նկատմամբ տածած անսահման ատելութեան զգացումով համակուած՝ նրանք ոգեշնչում եւ իրենց սեփական նախաձեռնութեամբ, քաղաքական ինքնուրոյն մտածողութեամբ, բոլորանուէր եւ անվերապահ անձնուիրութեամբ օգնում, յորդորում, խրախուսում են իրենց ամուսիններին։

Ծերենցի վէպերում հանդէս եկող բոլոր կանայք՝ «Թորոս Լեւոնի»-ի մէջ Եւփիմէն, Մարգարիտը, «Երկունք»-ի Վասկանոյշը, Հեղինէն, այս վէպում Սեդան եւ Համասպրուհին, բոլորը դրական կերպարներ են, բոլորն էլ օժտուած մարդկային լաւագոյն յատկութիւններով, հոգեկան հարուստ ներաշխարհով, բուռն հայրենասիրութեամբ եւ ռազմական ընդունակութեամբ։ Նրանք ոչ միայն ռազմադաշտում, այլեւ ամէնուր հանդէս են գալիս միշտ հաւատարիմ, միշտ համերաշխ, միշտ կամակից իրենց ամուսիններին ու սիրած էակներին։ Թէոդորոս Ռշտունու կարծիքով երկիրը վտանգի մէջ լինելու պահին կինը կարող էր եւ պէտք էր ղեկավարէր երկրի քաղաքական ու տնտեսական կեանքը։ Նա, շինականներից լսելով Մամիկոնեան տիկնոջ գովքը, ասում է. «Քիչ-քիչ ինձ համոզմունք կը դառնայ, թէ մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պէտք է յանձնենք երկրին կառավարութիւնը, եւ միայն պատերազմով զբաղինք, միայն եթէ այն եւս կարենայինք յաջողութեամբ ի գլուխ հանել» (էջ 449)։

Վիպասանն առանձին քնքշանքով է կերտել Ռշտունեաց գեղեցիկ օրիորդի կերպարը։ Թենին հանդէս է գալիս այն ժամանակ, երբ ծերուկ Ատոմին ամօթխած ակնարկներով պատմում է իր առաջին սիրոյ մասին։ Ամառային մի լուսնեակ երեկոյ՝ Թենին պարտէզում Ատոմի հետ զբօսնելիս, բացում է նրա առաջ իր սրտի գաղտնիքը։ Նրա մտքով անցնում են բազմաթիւ պատկերներ, որոնք գերազանցապէս վերաբերւում էին իր եւ Գրիգորի առաջին հանդիպմանը, այն մտերմութեանը, որ աստիճանաբար անզուսպ եւ նուիրական սիրոյ էր փոխուել։ Թենին, առաջին անգամ տեսնելով Գրիգորին, յափշտակւում է նրանով, գերւում նրա բարեմասնութիւններով, խելացիութեամբ, պարզ ու համեստ խօսակցութեամբ։

Գրիգորի՝ Վարդանաբերդ մեկնելու նախորդող գիշերը նրանք անկեղծ սրտաբա-

[20] Տե՛ս **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 111-112։

ցութեամբ խօստովանում են միմեանց իրենց ջերմ սիրոյ մասին։ Երբ Թենին տեղեկանում է Վարդանաբերդի հրդեհի մասին, հոգեպէս տանջւում է. թւում է, թէ իր սիրած էակն այլեւս չկայ, մեռել է։ Սակայն հաւատարիմ իր սիրոյ ուխտին՝ նա անսահմանօրէն դարձեալ սիրում է Գրիգորին եւ թախծում այդ սիրոյ համար, նրա երազների մէջ վերակենդանանում է առաջին հանդիպման օրերի վերյուշը։ Թենիի հոգին գնալով աւելի ու աւելի է վրդովւում, եւ ծանր պահեր է ապրում։ Նրա համար կեանքը դառնում է անիմաստ։

«- Չէ՛, հայրիկ, եթէ նա չի կայ, ինձ երջանկութիւն չի կայ, աշխարհս մութ է ինձ համար»,- ասում է նա Ատոմին (էջ 504)։

Եւ նա, ծանր թախիծով համակուած, լուռ ու անձայն սկսում է դառնապէս ողբալ իր սիրած էակի կորուստը։

Հեղինակն իր հերոսների հոգեկան ծանր ապրումների հիմնական շարժառիթները որոնում է իրականութեան մէջ։ Եւ դա ճշմարիտն է։

Բիւրեղ Մամիկոնեանի գերդաստանին վիճակուած ահաւոր ողբերգութիւնը, որ ցնցող պատկերներով արտացոլուած է վէպում, վճռական նշանակութիւն է ունենում Գրիգորի եւ գեղանի Թենիի բախտի ու ճակատագրի համար։ Վէպի գործողութիւնների զարգացման ընթացքում հեղինակը պատկերում է երիտասարդ հերոսների ողբերգութիւնը։

Վէպի ամէնից աւելի յուզիչ կերպարներից է գեղանի Արփէնին։ Դժբախտ աղջիկը, փոքր հասակից զրկուելով ծնողներից, գերի է ընկնում բարբարոս Թումայի ձեռքը։ Որբ ու անխնամ մեծացած դեռատի աղջկայ մանկութիւնն ու պատանեկութիւնն անցնում են արցունքով։ Նա օր ու գիշեր աղօթում ու աստծուց գութ եւ կարեկցանք է խնդրում ազատուելու բիւզանդական յղփացած ու ապականուած միջավայրից։ Իր վշտի մէջ ներսուզուած Արփէնիկի կերպարը զարգանում է հայրենի աշխարհից հեռու, օտարացած եւ խորթ միջավայրում։ Նրա համար անհրապոյր է մթնոլորտը, սառը, անտարբեր եւ անկարեկից են նրան շրջապատողները. նա տառապում է այդ այլանդակ քաոսում, հարազատներից հեռու։ Ծերենցն իր հերոսուհուն միջավայրի հետ բախման մէջ է դնում միայն այն բանից յետոյ, երբ ծպտեալ կերպով բիւզանդական արքունիք է մուտք գործում Զաւէն հայրիկը։ Վերջինիս եւ Արփէնիկի տեսակցութիւնից յետոյ հեղինակը հետեւում է նրանց ճակատագրերի զարգացմանն ու ընթացքին։

Գեղանի Արփէնիի շուրջը հիւսւում է սիրոյ զգացմունքների, որոգայթների մի բարդ ցանց։ Նրան են ուզում տիրանալ է՛ւ թագաժառանգը, է՛ւ աւազակ Թումա զօրավարը եւ շատ ուրիշներ։ Սակայն Արփէնին այդ մթնոլորտում կարողանում է պահպանել իր հոգու մաքրութիւնը, բարոյական անաղարտութիւնը։

Ծերենցի խորատես հայեացքից չի վրիպել այն միջավայրը, որ գոյութիւն ունէր բիւզանդական արքունիքում։ Հեղինակը մի կողմում պատկերում էր պալատական զեխութիւնն ու շռայլութիւնը, յղփացածութիւնն ու անբարոյականութիւնը, միւս կողմում՝ այդ այլանդակ միջավայրում տառապող թշուառներին, որոնք շատ աւելի ազնիւ էին, վեհանձն, պատուազգաց, ընդունակ անկեղծօրէն միմեանց յարգելու, քան ցոփութեան ու շռայլութեան մէջ ապրող Թումաներն ու անկելինաները։ Ատելով վերջիններիս ու նրանց նմաններին՝ հեղինակն իր ամբողջ համակրանքը վերապահել է նրանց զոհերին՝ արփէնիներին, զաւէններին եւ ուրիշներին։ Այստեղ աւելի քան ցայտուն կերպով է արտայայտուել հեղինակի դեմոկրատական աշխարհայեացքը։

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Ծերենցն իր պատմավէպերում կերտած կանացի կերպարներով, նրանց հերոսականութեամբ ու անձնազոհ գործունէութեամբ ցանկացել է դաստիարակել նոր ժամանակի սերունդներին։ Վէպերում հանդէս եկող կանայք ամենադժուարին պարագաներում անգամ բարձր են պահում իրենց հասարակական պարտքի գիտակցութիւնը՝ իբրեւ ժողովրդին նուիրուած ջերմ հայրենասէրներ։ Սոյն հրապարակման արդիականութիւնը պայմանաւորուած է նրանով, որ վէպերի կանանց հերոսական սխրագործութիւնների, նրանց կերպարների նկարագրութեամբ հնարաւոր է դառնում պարբերացման ենթարկել կանանց նախաձեռնութիւններն ու հերոսապատումը ազգային-ազատագրական պայքարի տարբեր ժամանակահատուածներում, արձանագրել կանանց մասնակցութեամբ իրականացուած ձեռքբերումները եւ ներկայ ու ապագայ սերնդի մէջ արմատաւորել ազգային ոգին մշտարթուն, վառ պահելու եւ հայրենասիրական դաստիարակութեան խիստ հրատապ ու կարեւոր գաղափարը։

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ